

Տարեկան 12 ֆր.  
Վեցամսեայ 6 ֆր.

Տարեկան 12 ֆր.  
Վեցամսեայ 6 ֆր.

Տարեկան 12 ֆր.  
Վեցամսեայ 6 ֆր.

Տարեկան 12 ֆր.  
Վեցամսեայ 6 ֆր.

Տարեկան 12 ֆր.  
Վեցամսեայ 6 ֆր.

Տարեկան 12 ֆր.  
Վեցամսեայ 6 ֆր.

Տարեկան 12 ֆր.  
Վեցամսեայ 6 ֆր.

Տարեկան 12 ֆր.  
Վեցամսեայ 6 ֆր.

Մանուկան տողը  
20 սանթիմ

Rédaction du Journal

«Ira vounk»

VARNA (Bulgarie)


Редакция

на ВѢСТНИКЪ

«Иравунк»

ВАРНА

Գրասրահը ետ չեն  
տրուիր



ՀԱՅ ԽՈՐՀ

ՄԱՅ ԿԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԱԲԹԻ ՆԻ ՇԱՐԱԹ

### ԱՅՐԻ ՔԱՅԱՆԱՆԵՐՈՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

\*\*\*

Ասկէ առաջ մեր ընթերցողներուն հաղորդած էինք թէ այրի քահանաներուն կրկին ամուսնանալու խնդրոյն համար վեհ. կաթողիկոսի հարցումին Պօղոս Կրօն. Ժողովը մերժողական պատասխան տուած է: Պատասխանագրին բառական երկար և գրաբար ըլլալուն պատճառաւ միայն անոր իմաստին ամփոփումը կ'ընենք հոս:

\*\*\*

Կրօն. Ժողովս իր ամբողջական գումարման մէջ ըստ հրամանին քննեց վեհաշնորհ Տիրոջ առաջարկը և խոհական խորհրդակցութեամբ ահա հետեւեալները եղան ժողովիս տեսութիւնները այդ խնդրոյ մասին:

Եկեղեցւոյ օրէնքները ու կանոնները միատեսակ չեն. անոնց մէջ կան առաքելական վճռով հաստատուածներ և կան յետոյ եկեղեցւոյ իշխանութեան կողմէ հրամայուածներ:

Եկեղեցական պաշտօնէին ամուսնական վիճակին վերաբերեալները առաքելական օրէնք են, որք կը հրամայեն անոնց մէկ անգամ ամուսնանալ ինչ աստիճանէ ալ ըլլան. ահա այդ մասին Պօղոսի յայտնի և յստակ խօսքը «Սարկաւազք լինիցին միոյ կնոջ այրի. և դարձեալ Վագուցցես երիցունս, եթէ ոք անարատ իցէ միոյ կնոջ այրի դարձեալ Պարտէ եպիսկոպոսին անարատ լինել միոյ կնոջ այրի» (Ա. Տիմ. Գ. 12՝ Տիմ. Ա. 6, Ա. Տիմ. Գ. 2): Արդ, աստուածային պաշտօնի նուիրուելէ առաջ եթէ ներուած չէ այրիներուն կրկին ամուսնացեալ ըլլալ. ինչպէս կարելի կ'ընայ ըլլալ նուիրուելէ յետոյ այդ ընել, առաքելական բացայայտ պատուէրը առ ոչինչ համարել ինչ որ եկեղեցւոյ մէջ հիմնական ու էական է և նախնական ու առաքելական, յայտնի է որ

բաժնուած բոլոր եկեղեցիներուն մէջ ալ նոյնը կը մնայ իբր ընդհանուր և անխախտ սկզբունքի: Ահա այդպիսիներէն մին է այս առաքելական կանոնը. որ սկիզբէն մինչեւ այսօր բոլոր եկեղեցիներու մէջ անաղարտ պահուած օրէնք է, արգիլել նուիրեալ պաշտօնեաներուն կրկին ամուսնութիւն ձեռնադրուելէ վերջ Այս մասին հին եկեղեցիները յունադաւան և ասորադաւան և անոնց բաժանմունքները այս խնդրոյ մէջ համաձայն են. իսկ Հատինադաւանները թէև ամուսնացեալները չեն ձեռնադրել, բայց այրիները եկեղեցականութեան ընդունելու մէջ համաձայն են բոլոր Արևելեաններու: Նորադանդները, կարծեցեալ բարեկարգութիւններու քմածին հրահրիչները միայն այս խնդրոյն մէջ տարբեր կը վարուին, բայց քաւ լիցի որ մեր Ուղղափառ և Առաքելական Ս. Եկեղեցին առաքելական կանոնը նոր ստեղծուած նորադանդներէն ուսանի:

Արդ եթէ եկեղեցական կանոնները քանի որ չեն ընդունիր ձեռնադրելու կրկին ամուսնացեալ այրիները և նոյն իսկ այրիի մը հետ մէկ անգամ ամուսնացեալները, և ոչ ալ կը ներեն կուսակրօն ձեռնադրուածներուն ամուսնանալ ձեռնադրութենէն յետոյ, ինչպէս կարելի կ'ըլլայ ձեռնադրուած այրին արտօնել որ կրկին ամուսնանայ: Զնչինք արդեօք մաշտոցէն ձեռնադրութեան բացայայտ խորագիրը որ կըսէ «մինչեւ չորս աստիճան ունեցող կիսասարկաւազները միայն կրնան ամուսնանալ, իսկ անկէ վերին հրաման չկայ, իսկ մեծ օգուտ և հանրային վստահութիւն կը ծագի իր անձը զրկանքի ծանրութեան տակ դնող եկեղեցականին, անիկա աշխարհային և մարմնականներէն զրկուելով է որ աւելի հոգեւորական պատիւ կը ստանայ և ժողովուրդի աչքին բարձրագոյն և առաքելական ու հասարակ մարդերէն բարձր կերելի: Եթէ այրիացեալ քահանաներուն երկրորդ ամուսնութեան

արտօնութիւն տանք, նաեւ արտօնութիւն տուած կ'ըլլանք փրնտըռելու, պատրաստելու, հրապտելու, բաղդատելու, քննելու և ընտրելու երկրորդ կիները, մէկ խօսքով նոյնութեամբ կատարելու աշխարհի ծանօթ սիրահարութեան դրած ամեն պայմանները: Ներքինք արդեօք մեր քահանաներուն սքեմով ու նուիրագործութեամբ եկեղեցիներու ու տուններու մէջ իրենց զննութիւնները և հետապնդութիւնները տարածել, և անոնք որ կիներու և օրիորդներու սրտի գաղտնիքներուն աւանդատէրը ու խոստովանահայրը են կարող ըլլա՞ն աղատութեամբ ընել այն ինչ որ հետապնդողները ամուսնութեամբ կ'ընեն. այդ լա պէտք է ներէինք անոնց՝ եթէ ազատ ըլլային օրինորդապէս հետաժուտ ըլլալ երկրորդ ամուսնութեան: Եւ ի՞նչ տեսակ անտեղութիւններ ու դալթակցութիւններ առաջ չէին գար, եթէ օրէնքը չարգիլէր անոնց երկրորդ ամուսնութիւնը: Ուրեմն շատ մեծ է տարբերութիւնը առաջէն կազմուած ամուսնական կենցաղին և նոր կազմուելիքին միջև. և առաքելները մեծ իմաստութեամբ հրամայեցին և եկեղեցիները օրինադրեցին ու բացարձակապէս արգիլեցին երկրորդ ամուսնութիւնը այրի քահանաներուն, ինչ որ ցարդ անխախտ կը պահէ մեր Ս. Եկեղեցին առանց բացառութեան մը: Հոս աւելորդ կը համարենք ոմանց առաջարկը այրի քահանաները այրի երէցկիներու հետ ամուսնացնելու մասին, զի ծագրելի է արգարեւ բռնադատեալ ընտրութեամբ մէկու մը ամուսնութիւնը:

Ի դէպ է հոս քննել թէ քանիներ կան որոնց համար ոմանք կուզեն քակել հնաւանդ կանոնը: Այրի քահանաները փոքրամասնութիւն կը կազմեն, և ասոնց մէջէն ալ շատ քիչերն են որ կրկին ամուսնանալու տարիք ունին. ասոնցմէ ալ քանի՞ հոգի են որ ամուսնանալ ուզեն, որովհետեւ ոմանց արտաքին միջոց-

ներ կը պակսին, ոմանց ալ փափաք և գրգռու, և ոմանք ալ ժողովուրդի կարծիքէն կը պատկառին. ուրեմն այրի քահանաներէն քիչերը և շատ քիչերը միայն պիտի օգտուէին այն արտօնութենէն, եթէ երբէք հնար ըլլար անոնց ներել երկրորդ ամուսնութիւնը. և այս խիստ սակաւթիւններու համար միթէ օրէնք է՞ քակել քանդել առաքելական և նախնական կանոնը:

Գալով այն թշուառ եղկերին, որոնց մասին կը գրէ կոնգրակը, թէ այրիանալով իրենց զաւակներով անտէրունջ մնացած են. ասոնց մէջ ալ շատ հազուադէպ է որ չունենան մայր կամ քոյրակցներ կամ քէնի, հօրաքոյր կամ մօրաքոյր որոնց կըրնան յանձնել զաւակներու խնամքը: Եթէ այս դիւրութիւնն ալ պակսի անոնց և իրենց փափաք ու գրգռու գան ամուսնութեան, մեր եկեղեցին չը բռնադատեր զանոնք ամուսնութենէ զուրկ մնալու, միայն թէ չի ներեր անոնց քահանայութեան կարգի մէջ մնալ ու եկեղեցիի պաշտօնեայ համարուիլ. որովհետեւ պաշտօնը իրաւունք չէ այլ շնորհէ, և եկեղեցին կատարեալ իշխանութիւն ունի պայմաններ և կանոններ սահմանելու իր պաշտօնեաներուն, և անոնց կենցաղը և ուրիշ հանգամանքները ըստ ամենայնի սահմանադրելու: Ի՞նչ չը բռնադատուի պաշտօնի մըտնելու, իսկ ով որ կը մտնէ յօժարութեամբ յանձն կառնէ անոր պայմաններն ալ:

Այս մերժողական բացատրութիւններէն վերջ. Կրօն. Ժողովը կը գնահանէ վեհ. կաթողիկոսին կոնդակով առաջարկ մը բերել և կարծիքներ հարցնելու բարեհաճութիւնը, որ առիթ կ'ընծայէ կարեւոր լուսաբանութիւններու, և առջեւ կառնէ դժգոհ պարագաներու, որոնք կրնային սպրդիլ ու կը յաւելու: Երբ թէ ամեն առիթներու մէջ ալ վեհաշնորհ Հայրապետը հաճէր գործերը նոյն կանոնի տակ զննել և գլխաւոր Աթոռներու

կարծիքը առնէր, որով ժողովա-  
կան որոշումներու ընթացքը կը  
վերանորոգուի, երբ ժամանակին  
պտրագաները չեն ներքի դի-  
րաւ եպիսկոպոսներու և վարդա-  
պետներու և գլխաւորներու կամ  
ժողովրդի ներկայացուցիչներուն  
մէկ տեղ գումարուիլը:

Կրօն. ժողովը այս վերջին  
խօսքերով կը հասկնայ Կաթողի-  
կոսին թէ ամեն առիթներու  
մէջ պարտի գլխաւոր Աթոռնե-  
րու կարծիքին դիմել և ըստ այ-  
նում վճիռ արձակել, որպէսզի  
սխալներ չը սպրդին: Այս քաղա-  
քավարի ապտակ մըն է վերջերս  
էջմիածնայ մէջ Կաթողիկոսի ա-  
նունով անցած դարձածներուն  
համար:

### ՌՈՒՍԻՈՅ ԳՈՐԾԵՐԸ

Բեգերսպուրկ, 29 հոկտ.

(Շար. նախորդ թիւին)

Պետական պաշտօններու  
քաղաքական կուսակցութեանց  
մասնակցիլը արգելող շրջաբե-  
րականը ուրիշ բարդութիւննե-  
րու ալ տեղի կուտայ. ուսուցիչ-  
ները իբր կառավարութեան  
պաշտօններ կը նկատուին ա-  
նոնք ալ քաղաքական ընկերու-  
թեանց մէջ չըմտնելու արգել-  
քին ենթակա՞ն են: Վարչական  
տրամաբանութիւնը հաստատա-  
կան պատասխան կուտայ, բայց  
եթէ համալսարանի ուսուցիչնե-  
րը չեն կրնար մասնակցիլ երկ-  
րին քաղաքական կեանքին, հարց  
կը ծագի թէ ո՞վ կը մնայ այդ  
կեանքին մէջ: Կրթական նախա-  
րարութեան մէջ կըսեն թէ գործը  
չառ հեռուն տարուած է և յանձ-  
նախումբ մը կողմուած է խնդի-  
րը ուսումնասիրելու համար և  
տեսնելու թէ շրջաբերականը չէ՞  
կարելի փոխել:

### Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

29

### ԱԻՍԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

—\*—

### ԳՈՐԾԱՆԸ

(Շար. նախորդ թիւին)

Պապա Մաթոս անգուստ ամիսին  
վրայ շարժում մըրաւ ու անձնաթի-  
րութիւնը փայփայուած խնդուկի մը  
պէս հետեւեալ սարսուռի դաւադրու-  
թիւնը պատմեց:

«Առաւ և մը խելքս՝ փշեց, ելայ  
կեմ գիւղը գաղի: Ան ատեն ողջ էր  
Առաքել էֆէնտին: Չամբան աղու  
մտածում մ'ունեցայ: Գիտէի որ ֆե-  
տայի անուն տալու պէս ինքզինքիս,  
ա՛լ ձեռքի վրայ պիտի պտտէի: Եղայ  
ֆէտայի մը: Երբ գիւղը՝ մտայ, ամի-  
նէն առաջ ուսուցչին ներկայացայ:

Նահանգային խորհուրդներու  
անդամներն — գէմաթիւները —  
ալ կառավարութեան ծառայու-  
թեան մէջ են և քրեան չեն  
կրնար քաղաքական կուսակցու-  
թեանց մէջ մտնել: չատերը ար-  
դէն իրենց հրաժարականը տու-  
ած են, ամենն ալ բողոքելով  
այն շրջաբերականին դէմ որ ժո-  
ղովրդեան ամենէն աւելի լու-  
սաւորեալ մասը լուր և ստի-  
պէս վերջապէս այսօր դատաւոր-  
ներն ալ ուրիշ պաշտօններու  
նման նոյն արգելքին մատնուած  
են: Երբակոյժ անոնց կարգիչ  
ո՛րէն քաղաքական ընկերութեան  
մասնակցիլը դատաւորները պաշ-  
տօնէ անխախտելի ըլլալով, հե-  
տաքրքրական է հասկնալ թէ  
կառավարութիւնը ի՞նչ պիտի ը-  
նէ ըմբոստացող դատաւորնե-  
րուն: ասոնցմէ մէկը Մ. Ս. Բառիա-  
թէն, հրատարակած է բաց նա-  
մակ մը ուղղուած արդարութեան  
նախագահին բողոքելով Երա-  
կոյտի որոշումին դէմ:

\* \*

Հակառակ այն բոլոր արգելք-  
ներուն որ կը հանուի ընդդի-  
մադիրներու գէմ, այս վայելեա-  
նիս լաւատեսութիւնը կը տիրէ  
Բեգերսպուրկի մէջ: Կը նախատես-  
ուի արդի կառավարական դու-  
թեան տնկումը, նահանգներէն  
հասնող հեռագիրներ կիմացնեն  
թէ ամեն տեղ մերձակայ ընտ-  
րութեանց լուրը հրճուանքով  
ընդունուած է և հաւանական է  
որ բաղդատաբար աւելի խաղաղ  
շրջանի մը մէջ կը մտնեն: Երբ  
ուսմբերու և վեցհարուածեան-  
ներու տեղը դրաւեն թուէի յայ-  
տարարութիւնները և տոմսակ-  
ները:

\* \*

Փոքրիկ տեսակցութենէ մ'ետքը, յայտ-  
նեցի թէ անձնուրած մըն եմ և կու-  
ղեմ ՊապաՄատանի սանձանք գտնուող  
խումբերուն մէջ մտնել: Ողորմելի  
մարդը շատ սիրով ունեղենց գիտ ու  
վարժարանին մօտ եղող տուն մ'առաջ-  
նորդեց: Գիշեր մը պիտի մնայի այն-  
տեղ... յետոյ պիտի մեկնէի: Կէս օրէն  
եղան էր: Տունին մէջ պառաւ կին մը  
եւ մանկամարդ աղջիկ մը կային: Պա-  
ռաւը նստած էր ճախարակ կը մանէր,  
իսկ մանկամարդ աղջիկը՝ գոլպայ հիւ-  
սելու զբաղած էր: Վայկեան մը սպա-  
սեցի... յետոյ գեղանի աղջկան երե-  
սը նայեցայ: Ա՛խ, սիրտս սկսաւ զարթ-  
նել: Աչքս չէի կրնար ուրիշ կողմ  
դարձուցնել: Ի՞նչ ընէի... Կը ղողայի  
բոլոր մարմնովս: Այսպէս մէկ երկու  
ժամ անցաւ: Պառաւը գործի մը հա-  
մար ճախարակը ձգեց ու դուրս ելաւ:  
Ես մինակ մնացի մանկամարդ աղջկան  
հետ: Հետեւեալ քաղաք, ճիշտ ատենէն էր...  
ոտքի ելայ ու օտոնեցայ անոր: Աղջիկը  
կասկած մը չունեցաւ ինէ... Կարծեց  
թէ գուլպան տեսնելու նպատակ ու-  
նէի: Առանց ժամանակ կորսնցնելու,  
գրկիս մէջ առի գիւնքը, գետին պառ-

կոմս վիթթէն կրկին գործի  
գլուխ կը կանչուի: Վախոն-սա-  
լօն մը ղրկուեցաւ դէպի սահմա-  
նագլուխ, վէճիպօլօ, զանի առ-  
նել բերելու:

Անոր անկումին հետեւեալ օրը՝  
որ վեց ամիս անցաւ, զանի կա-  
տէին ամեն կողմէ. պալատէն  
կատուէր հակում. 17ի հրովար-  
տակը խլած ըլլալուն համար,  
ժողովուրդէն կատուէր իր խոս-  
տումները չը կրնալ գործադրե-  
լուն համար, բայց այսօր ամենը  
մոռցուած է և կոմս վիթթէի ժա-  
մանումին անհամբերութեամբ  
կը սպասուի: Բեգերսպուրկի մէջ  
ի նպատ անոր մեծ շարժում մը  
կը նշմարուի, իր նպատաւոր-  
եալները, իր յաճախորդները՝ իր  
բարեկամները — և որոնք բաղ-  
մաթիւ են — գլուխին կը բարձ-  
րացնեն և կը վազեն ամեն կողմ  
կրկնելով թէ վիթթէն պիտի վե-  
րադառնայ և թէ միակ մարդն  
է այն սր կրնայ բան մը ընել:  
Իր երեկի թշնամիներն ալ կը  
պատրաստուին լաւ ընդունելու:  
Թիւն մը ընել անոր, որովհետեւ  
նա գիտէ թէ ի՞նչ կրնայ ըլլալ:

\* \*

Պալատին և կառավարութեան  
բարձր շրջանակներուն մէջ մեծ  
հաւատք կայ կոմս վիթթէի ե-  
լեւտագէտի տաղանդի մասին սր-  
մէ անոնք կը յուսան թէ անիկայ  
պիտի կրնայ բերել արտասահ-  
մանէն մեծ դրամատուններու ա-  
ջակցութիւնը և ինչ ինչ յար-  
մարութիւններ որոնք կարենան  
փրկել մեր ելեւտական կացու-  
թիւնը: Բեգերսպուրկի քաղաքա-  
կան շրջանակներուն մէջ բարձ-  
րաձայն կըսուի, թէ իրօք թէեւ  
վիթթէն իր սխալները ունի  
բայց Սթօլիբերին պէս ալ չէ, նա  
ճշմարիտ պետական մարդ է, ա-  
զատական է և այլն... Կը տեսնուի

թէ հողը պատրաստ է նպատաւ-  
որապէս անգամ մըն ալ գործի  
գլուխ անցնելուն (երրորդն է  
արդէն) անոր զոր քիչ ժամանակ  
առաջ «սպառած մարդ» կը նկա-  
տէին: Միայն «ճշմարիտ Ռու-  
սեր»-ու կուսակցութիւնը չախոր-  
ժիր անկէ, կը սպառնայ կոմս  
վիթթէին և կամբաստանէ զանի  
բացայայտ կերպով թէ նա ըս-  
պանել տուած է Բլէվէն:

Էմուէլ, Ռուսկին

### ՎԵՐ. ՀՆՁԱԿ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Վառնայի վեր. Հնչակ, Մաս-  
նաճիւղի մէկ քանի գիտակից  
անդամներ նկատելով թէ իրենց  
ղրկած պատգամաւորը խոյս կու-  
տայ անհրաժեշտ հարկ եղած  
ճշգրիտ տեղեկութիւնները տա-  
լէ վերջին Պատգամ. ժողովին և  
կուսակցութեան վիճակի մասին,  
եկած են խնդրել խմբագրու-  
թեանէս իրենց առջևը բանալ ի-  
րաւունքի սիւնակները:

Խմբագրութիւնն նախանձա-  
խնդիր հայ յեղափոխութեան  
գիտակցօրէն զարգացման, ան-  
ձամբ ալ հաստատելով պատգա-  
մաւորին ճշգրիտ բացատրու-  
թիւններէ փոստափումը, սիրա-  
յօժար յանձն կառնէ թերթիս  
սիւնակները բանալ Հնչակեան  
գիտակից անդամներու առջև:

ՀՐԱԺԱՐ

Ողբացեալ Գ. Չիթճեանի  
խնդրանքովը և կուսակցութիւ-  
նը հետզհետէ մաքրելու ու բարձ-  
րացնելու խոստումովը միայն  
շուրջ երեք տարի առաջ մտած  
ըլլալով վեր. Հնչակեան կու-  
սակցութեան մնջ, մինչև վեր-  
ջին ժամանակներս վարած եմ  
Վառնայի մասնաճիւղի վարչու-  
թեան ատենապետութիւնը մաք-

ըլլալու Դեռ անանկ գործեր ըրած է  
սատանան անգամ չը կրնար ձեռնար-  
կելու եւ գիտէ՞ք, այսքան ատեն մէկը  
կասկած ունեցած չէ:

— Իրաւ... բացառանջեց երիտա-  
սարդ թիւրքը:

— Իրաւ, ես, յարեց պապա Մաթոս  
յաղթական մարդու մը պէս: Այնպիսի-  
քիս վրայ ամեն բան ընելու է... բայց  
քաղութիւնն այն է որ չը բռնուիս:  
Մուկին մէջ ուղածդ կրնաս ընել:

— Սղէկ, ամա... ընդհատեց երի-  
տասարդը:

— Ի՞նչ...

— Ի՞նչ մըն ալ սիրտ պէտք է:

— Հարկաւ... առանց սիրտ ուրե-  
նալու, ո՞վ կըսէ թէ մարդս ատանկ  
կենաց եւ մահու գործի մը մէջ մտնե-  
լու է: Ես բուռական է որ նպատակ մը  
ունենամ... ալ օձիքը ձեռքս չ'անցու-  
ցած, անկարելի է որ հանդարտիմ: Ին-  
ժի համար երկիւղ, զգուշութիւն կամ  
թէ խոստմնազանցութիւն չըկայ: Գի-  
տեմ թէ մահս աչքիս առջևն է. դարձ-  
եալ ետ չեմ դառնար: Պատմեմ դէպք  
մը, որ պիտի ստակացնէ ձեզ: Ասկից  
երկու տարի առաջ, երբ կոտորածը

բազմոթումի ակնկալութեամբ:  
Բայց ցաւալի է յայտարարել  
թէ կուսակցութիւնը փոխանակ  
զարգանալու և մաքրուելու, ընդ-  
հակառակը, մաքուր և զարգա-  
յած ու գիտակից տարրերը հե-  
տը հետեւեալ անկէ կը հեռանան, և  
միևնոյն ատեն գործուած սխալ-  
ները մատնանշող ու դատող ըն-  
կերներու գէմ դառադրութիւն-  
ներ կը սարքուին, և մանաւանդ  
վերջերս ջանք կը թափուի  
կազմակերպութիւնը գուհիկնե-  
րու մարդամեքենաներու կուսակ-  
ցութիւն մը դարձնելու:

Նաև նկատելով թէ վերջին  
Պատգամ. Ժողովէն դարձող Վա-  
նայի մասնաճիւղին պատգամա-  
ւորը խոյս կուտայ հարկ եղած  
բացատրութիւնները ու տեղե-  
կութիւնները գիտակից ընկեր-  
ներու տալէ և միայն միամտակ  
մարդիկներ իր գլուխը ժողոված  
քմահաճօրէն գործել կուզէ իր  
լիազօր ներկայացուցիչ և այլ և  
այլ պատուակներով հեռացնել  
կը ջանայ գիտակից ընկերնե-  
րը:

Վերջապէս նկատելով թէ գի-  
տակից ընկերներու գէմ դառնալէ  
և դրամ հաւաքելով յուսկէտս  
վատնելէ զատ ուրիշ գործունէ-  
ութեան հետք չը կայ ցարդ կու-  
սակցութեան մէջ. ասոր մէկ ա-  
պացոյցն ալ այն է որ վերջին  
Պատգամ. Ժողովին երկրէն ոչ  
մէկ պատգամաւոր եկած չէ:

Աւստի խզիս և ընկերներու  
առջեւ պատասխանատու չը մնա-  
լու համար — մինչև այսօր իմ  
ընկերակից պարտականութիւն-  
ներս լրիւ կատարած ըլլալով  
հանգերձ — այլևս չեմ ուզեր  
մնալ «Վեր. Հնչակեան» կոչուող  
կուսակցութեան մէջ ու կը հրա-  
ժարիմ բացարձակապէս:

ԱՐԳՈՍ

2 նոյեմբեր 1906

Վառնա

չէր տեղի ունեցեր. որ մը քաղքին  
մէկ անշուշտ փողոցէն կանցնէի. Յան-  
կարծ աչքիս զարկաւ գեղանի կին մը,  
որուն նմանը հորինելու մէջ կարելի  
է գտնել կինը ցածուկ ու փրփրկած  
տունի մը պատուհանը նստած էր: Գիշ  
մը յառաջացայ... բայց ոտքս կաղալ  
սկսաւ: Մտածեցի... չորս գին նայե-  
ցայ. փողոցը բոլորովին ամայի էր, ինչ  
որ է, երկար չսպասեցի: Մտ դարձայ  
ու տունին դուռը ջալեցի: Կինը բացաւ  
դուռն ու զարմանքով մը երեսս նայ-  
եցաւ:

— «Մինա՞կ էք, տիկին, հարցուցն  
կնոջը:  
— «Այո՛, պարո՞ն, ամուսինս խա-  
նութն է, պատասխանեց կինը կաս  
կարմիր կտրած:  
— «Ե՞րբ կուգայ:  
— «Իրիկուսան,  
— «Կուգէի տեսնալ զինքը... ինչ  
որ է... Թո՛ղ միայ լաղուան:  
Այսչափ բաւ համարելով մեկնե-  
ցայ:  
Ամբողջ օրը թափառեցայ փողոցներ:

### ՀԱՅԻ ԿԵԱՆՔԷՆ

Այն նախը. որուն վրայ պիտի խո-  
սինք. արժանի է տեղեւոյ հայ հասա-  
րակութեան ուշադրութեան, այս դի-  
տակցութեամբ է որ հրապարակ կը  
հանենք այն ինչ որ պատահած է ու  
կը պատահի Սիսական վարժարանին  
մէջ, այն ժամանակ երբ ուսուցիչներ  
ու աշակերտներ հեռացած են անկէ եւ  
կամ կերակրի պատճառաւ գոց է վար-  
ժարանը (թէև գոյգ դռները ամառ  
ձմեռ, գիշեր ցօրեկ միշտ բաց եղած  
են):

Գանի մը շաբաթներէ իվեր ամեն  
կերակրի տեսած եմ խուսի խուսի մար-  
դիկներ, որոնք կը մանեն վարժարան:  
Ասոնցմէ ոմանք Որբախնամի գործեր  
ունին կարգադրելիք, ոմանք ժողով  
ունին, ոմանք ալ ներկայացուցիչ տա-  
լու կը պատմատուներն եւ փորձերը  
կատարելու կուզան: Շատ լաւ, ըսե-  
լիք չկայ քանի որ անոնք ամենքն  
ալ շատ բարի նպատակներով կը հա-  
ւաքուին այնտեղ: Բայց ինչ ըսենք ա-  
նոնցմէ ոմանք, մասնաւորապէս թա-  
տերապէս երիտասարդներուն, որոնք  
անկերակցաբար չարքենիներու պատճառ  
կը դառնան չնորհիւ իրենց մէջ գտնուած  
անկիրթ ու անխելք անհասներու, ո-  
րոնք վարժարանին դուռը տեսնալու  
արժանի չեն եւ որոնց տեղը վտա-  
հաբար կամ գինետունն եւ կամ փո-  
ղոցն է:

Վարժարանին դասարանին յատակ-  
ները, որոնք նախապէս մաքուած են  
յալովոր օրուան համար եւ ուր պիտի  
նստին աշակերտներն, կը ծածկուին  
սրկարի մարած մնացորդներով, ոմանք  
ալ առանց ամենափոքր խղճահարու-  
թեան կը լեցնեն դանդաղ հէզ տողոց  
դարանները (պզտիկները ժողովելու  
համար արդեօք): Առաւօտուն երբ դա-  
սարան կը մանեն աշակերտները ծխա-  
խոտին զղուելի հալ խոռոչուած գինով  
մարդոց արտաշնչած գարշելի օդին հետ  
կը դիմաւորէ զիրենք: Այսչափով չը  
վերջանար, գրառախտակին վրայ գրծ-  
ուած են միմտական, այն ալ յատ-  
կապէս կնոջ պատկերներ, որոնց կըց-  
ուած են այլ և այլ փողոցային բա-  
ռեր, պատերու վրայ արձանագրուած  
են յիշոցներ ասոր անոր հասցէին, ու  
այս ամենը ըրած են այն մարդիկ, ո-  
րոնք ժողովուրդը կրթելու ու ազ-  
նուացնելու համար բնութիւն կը ծառա-  
յեն:

ըրե մէջ ու սպասեցի:  
Իրիկուան դէմ քառասունը անցած  
մարդ մը տեսայ, որ այդ դուռէն  
ներս կը մտնէր: Խեղճ ու կրակին  
մէջ կերեւեալ:  
Առտուն արեւը չը ծագած, նորէն  
այդ փողոցը մտայ ու սպասեցի մար-  
դուն: Կէս ժամի մը չափ կենալէն ետ-  
քը, թշուառականը դուռս ելաւ տու-  
տէն եւ ուղղակի դէպի չուկան ուղ-  
ղուեցաւ: Ես հետեւեցայ իրեն: Հաս-  
կցայ որ մանածի վրայ գործ կընէր  
փոխաբար մընէր:  
Հաստի ոտիկանութեան գաղտնի  
գործակալ Առաքէլ էֆէնտիին դիմեցի  
եւ յայտնեցի թէ այդ փոխաբարներն  
վրայ կապակածներ ունէի: Նոյն օրը  
ձերբակալուեալ տուրի ու բանտը նետեցի:  
Կը մնար բուն ծրագրիս: Ատիկայ գոր-  
կադրելու համար, Դիշերը բանտարկ-  
եալի կնոջ դուռը զարկի: Կինը մինակ  
էր:  
— «Տիկին, մտիկ ըրէ՛ք, ըսի կեղծ  
ձեռով մը. ձեր ամուսինը բանտարկած  
են, անտիկ չէ՞:  
— «Ո՛հ, այո՛, պարոն, մընջեց գե-

Այս ամօթալի անտեղիութիւնները  
կը պատահին մանաւանդ գիշերները,  
մենք չենք քաշուիլ բուն զայլոյ-  
թով յիշել թէ շաբաթ երկուս ազգա-  
մէր պարոններէն մէկը, գինետան մէջ  
խմածը ու կերածը չը կրնալով հանել  
ստամոքսէն թափած է վարժարա-  
նի վարի միջանցքը, ուրկէ երթեւեկը  
անպակաս լինելով հանդերձ անտեսա-  
նելի մնացած է եւ միայն կերակրի կէս  
օրէն վերջը վերցուեցաւ այդ աղտո-  
ղութիւնը: Այս կերակրի օր վարժարա-  
նը գտնուողները, որոնց մէջ նաեւ ա-  
շակերտներ, կըցան որոշիւ ալքոլին  
հոտը, որով լեցուած էր միջնորոտը: [՝]  
Ով պարոններ, դուք որ ժողովուր-  
դը զարգացնելու կրթելու, յեղափո-  
խելու հովեր կառնէք, ինչպէս ձեր  
անորակելի ընթացքը կը հաշտեցնէք  
ձեր բարձր, իտէալական գաղափարնե-  
րուն հետ, չենք ըսեր թէ ձեր մէջ պար-  
կեշտ մարդ չկան, բայց ասով կրնա՞ն  
միթէ արդարաւե՛ղ գործուած խայտա-  
րակութիւնները:

Ու ամեն մարդ իրաւունք ունենալ  
կը կարծէ վարժարանէն ներս մտնելու  
«ազգին դպրոցնէ» ըսելով: Այո. ազ-  
գին դպրոցն է եւ այնտեղ կը կրթուին  
ազգին զաւակները, սակայն չէ այն  
գինետուն, հաւաքատեղի, աղբանց կամ  
սրճարան. դուք կաղտոտէք ազգին  
տունը ու ազգին զաւակներն են որ կը  
վայելեն ձեր ապականութիւնը, դուք  
պատերն ու գրառախտակները հայո-  
յանքներով կը լեցնէք ու ազգին զա-  
ւակներն են որ դանդաղ կը կար-  
դան:

Մեզ կը թուի թէ դուք այդ փաս-  
տարանութեամբ աւելի իրաւունք ու-  
նիք եկեղեցիին մէջ ընելու ձեր փո-  
ձերն ու ժողովները, քան թէ վար-  
ժարանին մէջ, որովհետեւ եկեղեցին  
ամեն հասակի ազգայնոց համար է,  
մինչդեռ վարժարանը յատկացուած է  
միայն եւ միայն ազգին փոքր զաւակ-  
ներուն:

Միանգամ ընդ միշտ վերջ տալու  
համար այս խառնափոթ վիճակին,  
շատ բանաւոր ու խելացի գործ մը կը

(\*) Ասոնք այն տղաքներն են ո-  
րոնց հետ վաժարանին ուսուցչուհիներ-  
ուն ընմ ելլել եւ գիշերային փո-  
ձեր ընելը արգելեց անցեալ տարի  
Հոգաբարձութիւնը. եւ այդ պատճա-  
ռաւ հրաժարեցան ու մեծ խնդիր հանե-  
ցին այդ ուսուցչուհիները. Ժողովուրդը  
թող դատէ:

Մ. Խմբ.

դանի կինը:  
— «Լաւ... մի վախճաք, երկու օր  
չանցած պիտի ազատուի:  
— «Աստուծո՛ւ ձեր բերնէն լսէ՛, պա-  
րոն, հրամմեցէք վեր, ղողգղաց ան:  
Խաղաղութիւնը անհրաժեշտ է վեր ել-  
նելով սենեակ մը մտայ, ուր երկու  
տարեկան մանուկ մը կը քնանար  
համալ թաղմոցի վրայ:

— Գեղանի կինը սուրճ մը եփել ու-  
ղեց, բայց ես առարկեցի թէ ժամանակ  
չ'ունէի:  
Եւ որովհետեւ սիրտս հանդարտ չէր,  
առանց սպասելու ոտքի ելայ նստած  
տեղէն ու գեղանի կինը բոլոր ուժովս  
գրկեցի: Ե՛հ, դիմադրե՛լ... կէս ժա-  
մէն աւելի տեսեց, մինչեւ որ մարած  
վիճակի մը մէջ ինկաւ բաղմոցին վը-  
րայ: Դիմադրութեան ժամանակ պզտիկ  
լամբար մը կար փայտէ սեղանի մը  
քով, վար ինկած ու մարած էր, հե-  
տեւաբար սենեակը մուժ էր բոլորովին:  
Երբ կինը չարչարանքին եւ ըսնու-  
թեան տակ տապալեցաւ, թաղմոցին  
վրայ քնացող տղեկը ճիշ մ'արձակեց  
... այդ ճիշը շուտով խղղուեցաւ: Ես

լինէր, եթէ բոլոր խումբերը միանա-  
լով վարձէին ընդարձակ սրահ մը կամ  
սենեակ մը, ուր առանձին առանձին  
խմբերը, որոշուած կարգով մը իրենց  
ժողովներն ու թատրոնի փորձերն ը-  
նէին:

Մի՛ ոտնակոխէք ձեր եղբայրներուն  
բոյրերուն ու զաւակներուն իրաւուն-  
քը:

Մ.

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՍԼԻՎԷՆԻ ՏԵՐՏԵՐԸ

... Խմբագիր «Իրաւունք» լրագրոյ  
Ձեր պատուական թերթի 75րդ թի-  
ւը քիչ մը ուշ հասաւ ձեռքս, ուրկէ  
տեղեկացայ թէ՛ Սլիվէնի վարժարա-  
նին պիտո՞ճէն գոցելու համար Տէր  
Վաղինակը հանգանակութեան հանդի-  
սն:

Իբր պանդուխտ այդ քաղաքին մէջ  
երկար ատեն մնացած ըլլալով՝ ծա-  
նօթ եմ, հետեւաբար համոզուած եմ  
կատարելապէս թէ՛ ասիկա խաղ մըն է  
Տէր Վաղինակին կողմէ որ կուգէ մէկ  
քարով երկու թռչուն որոշալ, վասնզի  
նախ քանի մը շաբաթ առաջ ելաւ հը-  
րապարակաւ հրաժարական տուաւ  
թերթերու մէջ, որպէսմէ Պուլկարիոյ  
եւ Ռուստիոյ հայ գաղութներուն վը-  
րայ ընդհանուր պաշտօն մը ունեցած  
ըլլար: Ինք Սլիվէնի պարզ քահանայ  
մնէր, իր գործը թաղականութեան  
հետ էր. եթէ պիտի հրաժարէր կրնար  
թաղականութեան տալ հրաժարա-  
բանը եւ քաշուիլ, բայց ուզեց բոլոր  
հայ գաղութներուն իմացնել հրաժա-  
րած ըլլալը. եւ քանի մը օր վերջն ալ  
հանգանակութեան պատրուակին տակ  
քաղաքէ քաղաք պտըտելով ինքզինքը  
ցուցադրել, իւզոտ պատառ մը փրցնե-  
լու մտօք:

Այս մարդը ձեռնդրուած օրէն ի  
վեր առիթ կը փնտռէր այն քաղաքէն  
փախչելու. անգամ մը փախչել ուզեց,  
նախորդ, Թաղ. Խորհուրդը շատ ան-  
պատուաբեր կերպով ետ դարձուց  
զինքը Պուլկարէն. անգամ մըն ալ  
փախաւ, բայց պատիւաբարբարանը այն  
տեսակ կտրուկ միջոցի մը դիմեց որ,  
ճիշտ աւագ չորեքշաբթի օրը ստիպ-  
ուեցաւ ետ դառնալ, իր երեւակայած  
անդին ու փայլուն «տուն օրհնեմք»-

ալ բան մը չը հասկցայ այդ ճիշէն,  
մինչեւ որ գործս վերջացուցի: Առանց  
ժամանակ կորսնցնելու, տունէն դուրս  
նետուեցայ անյայտ եղայ: Հետեւեալ  
օրը լուր առի որ հայ կին մը իր գա-  
ւակը սպաննած էր եւ բանտը կը  
գտնուէր: Թէեւ կինը յայտնած էր ոս-  
տիկանութեան իր գլխուն եկածը,  
սակայն ոստիկանապետը չ'էր հաւա-  
սացած առարկելով որ ամեն որդեա-  
պան մայր բանաւոր պատճառ մը կը  
գտնար, ինքզինքն արկարացնելու հա-  
մար:

— Յետո՞յ... ընդհանրեց երիտասա-  
րդ բացազանջական ձեռով մը:  
— Ինչ յետոյ... ամեն բան ծած-  
րուեցաւ, երբ բանտին գուռներէն ներս  
մտցուցի զիրենք:  
— Հիմակ դեռ բանտն են:  
— Կինը քիչ ժամանակէն հոգին փը-  
չեց, իսկ մարդուկս բանտն է:

(Շարունակելի)

ներս առաջատանքովը տոնորուն 2-ի  
հասկանալի է երկար տարիներ քահա-  
նայ չեղած իր տիրացու այդ քաղա-  
քին մէջ ինչպէ՞ս ապրած էր. ինք ա-  
նոնց լուսնովը քահանայ եղաւ եւ վեր-  
ջը ելաւ զանոնք լքանելու համար  
հազար տեսակ միջոցներ ու պատը-  
ռակներ ստեղծելու

Սլիվկէնը՝ Պուլկարիոյ երկրորդական  
քաղաքներուն մէջ ամենէն բախտաւորն  
է, անիկայ ունի երեք հատ քարու-  
կեր խանութ եւ երկու հատ հասոյ-  
թաբեր ջաղաք. որոնց հասոյթով ե-  
կեղեցիին եւ դպրոցին պիտեմէն գո-  
ցել կարելի է, եւ եթէ փոքր բաց մալ  
ունենայ ան ալ ժողովուրդը կարող է  
հոգալ, ինչ ըսել է կալուածներուն  
հասոյթը ուրիշներուն կողմէն անցնի  
եւ վարժարան կառավարելու համար  
քաղաքէ քաղաք մուրացկանութեան  
դիմուի։ Այդ հանգանակութիւն կըլլայ  
բայց երբ եկեղեցի մը կը նորոգուի  
կամ հիմէն կը կառուցուի եւ կամ  
վարժարան մը կը նորոգուի կամ նորը  
կը շինուի. այն ալ մէկ մասը տեղւոյն  
ժողովուրդը կը հոգայ եւ եթէ մեծ  
բաց մը գոյանայ այն ատեն հանրու-  
թեան կը դիմուի ո՛չ թէ վարժարա-  
նին պիտեմէն գոցելու պատրուակով  
Հապա ինչ ընեն ուրիշ քաղաքներու  
հոգաբարձուները որ անմիջապէս  
մուտ չունին, բայց կաշխատին ներ-  
կայացումներով, վիճակահանութիւն-  
ներով տեսնել իրենց գործը. ահա թէ  
ինչ կըսեմ. «Սլիվկէն հանգանակու-  
թիւնը խաղ մընէ Տէր Վաղինակին  
կողմէ որ կուղէ մէկ քարով երկու  
թուան որսալ...»

ԱԿՆՑԻ

Շատ կաղաքիմ որ այս նամակս  
հաստատարկէք, որուն համար մեծ շնոր-  
հակալութիւնս կը յայտնեմ։

Նոյն

### ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ԿԵԱՆՔԵՐ

Հաստատուած ճշմարտութիւն մըն է  
թէ՝ մեր ազգային կարեւոր եւ բարե-  
նպատակ հաստատութիւններու վար-  
չութիւնը եւ դեկը ստանձնողներուն  
մէջ կը գտնուին այնպիսի անձեր, ո-  
րոնք ստանձնած գործին իրական ո-  
գին, եւ ճշմարիտ իտեալը առանց  
խղճի մտքը ըմբռնելու անանկ միջոց-  
ներ ձեռք կառնեն՝ եւ այնպիսի յոռի  
մտածումներ կը յղանան, որոնց հե-  
տեւանքը անգարմանելի կորուստ մը,  
եւ ցաւալի պատահար մը կըլլայ։ Այն-  
պիսիներ պաշտօնի զեկը ստանձնած ո-  
րէն սկսեալ, իրենք իրենց անձնական  
չանքը ապահով հիմերու վրայ դնելու  
համար կսկսին զանազան էնթրիքներ  
գարձնել, սուտեր եւ ամբաստանու-  
թիւններ յերկրի, արհամարել, արհա-  
մարել, եւ հայհոյութիւններով ան-  
պատուել, պատուաւորապէս օգնող,  
օժանդակող, հանրութեան անդամները,  
այսպիսով գործին (եւ նպատակին ի-  
րականացմանը տրգելք, եւ հաստատու-  
թեանը քայքայման պատճառներ կը  
հանգրստանան։ Այս ըսածներս հաստա-  
տելու օրինակներ չեն պակսիր, ինչպէս  
ահա Որբախնամին թաղումը, որ զիս  
կը ներշնչէ այս տողերը գրելու։

Ասկից 5 տարի առաջ Վաղինայի հայ  
հասարակութիւնը, մէկ խօսքով հայ  
գաղութը, պահ մը մոռնալով իր գրե-  
թախտութիւնը եւ իր թշուառ զաւակ-  
ներուն հաց եւ օրապահիկը, հայրենա-  
սիրական եւ ազգայնական ոգով զգաց  
զր սրտին, հոգիին մէջ, տարաբախտ

հայրենիքի ցաւերը, տեսաւ անոնց կա-  
րեկցութեան արժանի որբերը. եւ ա-  
նոր քանդուած լքուած օճախներուն  
ապագայ կեանք մը եւ լոյս մը ըլլա-  
լու համար, մարդասիրական բարեա-  
ցակամութիւնը ունեցաւ որբանամ  
ընկերութիւն մը հաստատել որբեր որ-  
գեղելու համար։ Աւա՛ղ աւա՛ղ շատ  
չուտ ահա այսօր ալ դժբախտութիւնը  
կուենանք տեսնալ այդ ընկերու-  
թեան քայքայուելու եւ անոր որբեգործ  
17 որբերու խորտակուած կեանքերը,  
շնորհիւ անձնական շահերու։

Այս տարաբախտ որբերուն անտէր  
վիճակին արգահատանքի ու կարեկ-  
ցութեան խոր բաժին մը կար մեր ա-  
մենուս սրտին մէջ, իսկ այժմ կրկին  
ողբալի եւ սրտաճմլիկ վիճակի են-  
թարկողներուն դէմ օրինաւոր հատու-  
ցում պահանջելու իրաւունք մեզ կը  
վերաբերի։ Այդ հատուցում պա-  
հանջողը թող ըլլայ բոլոր հայու-  
թիւնը, եւ թող պոռայ այդ ընկերու-  
թիւնը քանդող ատենապետի երեսին,  
«անխելճ միայն քու փառքիդ եւ շա-  
հուզ գոհացում տալու համար էր քու  
առջի ոգեւորութիւնդ եւ այժմ սրբա-  
սպան ընթացքդ»։

Մ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

## ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹՈՒՐԿԻԱ

Եւթնամեայ սէրասքէր գաւու-  
սընա բէք ֆէնա խապէրլէր եւ-  
թիւմիշ տիր Պէօյիւք սիւքիւտի-  
լէթտէ գալմալարը խիւաֆընա  
օլարագ՝ անլաշըմըշ տըր քի  
պիր միւտհիշ մաղուպիլէթ վու-  
գու պուլմուշ տըր, Ֆէյլի բաշա-  
նըն օրտուսընըն պիր գըսմը  
Մահմուտ Եահանըն ասքէրլէ-  
րինտէն իհաթէ օլընարագ, պէօ-  
յիւք թէլէֆիաթ վէրաիքտէն  
սօնրա, մէճպուր օլմուշ վահապի  
Պէտէլիլէրէ թէսլիմ օլմայա,  
Միւշիւր Ֆէյլի բաշա Սանաատա  
մուհասէրէ օլընարագ, պիր վա-  
գըթտան պէրու զայրը Հօտէյտա  
իլէ մուխապէրէ իտէմէլ իմիշ վէ  
աճըլղա տիւշար օլմագտա ըմըշ,  
Էհէմմիլէթլի իմաւալուր իսթէ-  
յօր, էն ազը պարի 20000 քիշի  
իգթիլղա ըմըշ, Պապը սէրասքէր  
միւթաճէլ թէտպիրլէր էլէ ա-  
լիյօր միւմքին օլտըղը գատար  
ասքէր թէտարիք իթմէք իշիւն

— Աճէմիւտան իլէ օլան սինօր  
մէսէլէսի իշիւն ինկիլիզ վէրուս  
տէվլէթլէրին իթիրաղաթընա  
Պապը Ալի պիր նէվ ճէվապը  
րէտտ վէրուպ, քէնտիսի խօտ-  
պէխօտ իրան հիւքիւմէթի իլէ  
մէսէլէի հալլ իտէճէկինի իսթար  
իթմիշ տիր Պապը Ալինին պու  
ճէսարէթինտէ Ալմանիա տիւրթ  
մէսի վար զանն իտէրիզ

Տիկէր թարաֆտան Պապը Ա-  
լի պիւտիւրտի Աճէմ հիւքիւմէթի-  
նէ քի՝ քէնտիսի միւնաղալը օ-  
լան եթըլէրին զապիթ ու իշղալը  
իշիւն Աճէմիւտանըն մուխալիֆ  
թէքլիֆաթընը թէտգըգա հա-  
ղըր տըր, ֆաքաթ Աճէմիւտան

ճէվապ իթտի քի՝ Հայիճիան նամ  
արաղիտէ վէ Վօղէնէյ աճէմ շէհ-  
րինտէ պիր թիւրք ասքէրի պու-  
լուհուր իքէն հիշ պիր միւլէքէ-  
րէ պաշլանմայաճագ։

Շիմաիլիք իշ պու մէքքէլտէ  
պուլուհիյօր վէ պուլուտլար գա-  
րարիյօր։

— Սթանպօլուտ հօլտ 16 թա-  
րիւլէ պիւտիւրիլմիշ տիր. «Տրա-  
պիլգօնտա էհտլի շէտիտ պիր իս-  
թիւլ չըգարտը, ասքէր վասի-  
թասը իլէ ասայիշ իպգա օլուհ-  
տու, Վէրկիի շախիի էօտէմէ-  
մէք իշիւն իշպու գարըշըլըդ  
զուհուր իթտի, Հիւքիւմէթ շիմ  
տիւրք մէքքիւր վէրկինին թահ-  
սիլինի թէէլիւր իթտի»։

Գաստէմօնիտէ, Բէրպէլտա վէ  
տահա բէք չօք թարաֆլարտա  
էհալի պու վէրկիի շախիի էօ-  
տէմէմէք իշիւն իսթիւլար  
օլտըղը վէ քէգա էրըրուտա պու  
պէհանէ իլէ հիւճումլար վուգու  
պուլտըղը օգույանլարըմըղըն  
մալիւմը տըր։

## ՏՍԽԻԼԻԷ

Վառնատա միւթմէքին էրմէ-  
նիլէրին քիլիսէ թարաֆընտան  
նուֆուսը թապատա օլընարագ,  
պէքեար զահալէրտէն մատատաը՝  
820 խանէյէ պալիզ օլմուշ տըր,  
Պուշլարտան 500 խանէսի թիւր-  
քիտան հիճէթ իտէնլէր օլուպ,  
միւթէպագըսը եթըլիլէր տիր,  
— Բօլօնիատա եարըլան մուգէ-  
լէրի թէմաշա իթմէք իշիւն  
Բրէն հաղըթլէրի Բօլօնիայ  
կիթմիշլէր։

— Եէնի կէօմրիւկ զակօնընը  
61 ինճի մատտէսի մուճէպինճէ,  
պէշ սէնէ կէօմրիւկ մուամէլէլէ-  
րինտէ պուլուհմայանլար գօմի-  
միսիօնճըլըդ իտէմէլէճէքլէր,  
իշպու մատտէտէն լաղլ ու թէպ-  
տիլինի իշիւն Սօֆիա, Ֆիլիպէ,  
Վարնա, Պուրկալ վէ Բուսնուգ գօ-  
միսիօնլէրի մալիյէ նաղըրընա  
պիր հէյէթի մալսուսէ կէօնտէր-  
միշ տիր։

## ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՎՈՐՏ Ա. հատը (162 էջ) 1 ֆր.  
» Բ. » (433 էջ) 2 ֆր.  
ՆՈՐ ԵՐԳՈՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԶ  
ՀԱՅԿԱԿԷՆ երկրորդ անգամ տպագ-  
րուած եւ ճիւղացած. Դին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկար-  
նեքու նիստ ու կացը ու թուրքիէ  
կրած տառապանքը անոնց ազատու-  
թեանն առաջ. Դին 50 ամսիմ

ՀԱՅՐԱՆԻՔԻ ԶՈՒՆՔ Պատկեր  
մը Տաճկահայաստանի իրական կեան-  
քէն. Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել  
ՎԱՌՆԱ «Իրաւունք» ի խմբագ-  
րութեան

## ԹԻՒՆՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, 9 Սեպտեմբեր

ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ

Վահան 100 քիւ. 10-50/13-40

Արապա 52-58 լիպ. 7-10.40

ԱՐԲԱ,

Վահան 100 քիւ. 10.20/10.40

Արապա 42-47 լիպ. 5-80/6

ԵՈՒԼԱՅ արապա 33/36 լիպ. 4.20/5.

» 100 քիւ. 11.11.25

ՉԱՎՏԱՐ արապա 52/57 լիպ. 7/7-20

ՅԱՍՈՒԼԵԱՐ արապա 100 քիւ. 16/23

ՌԱԲԻՑԱ 100 քիւ. — Եօդ

Արապա 100 քիւ. Եօդ

ՏԱՐԼ արապա 6. 6/40

ԳՕԼՕՁ արապա 55-60 լիպ. 11. /12.

ՄԻՍԻՐ 57-58 լիպ. արապա 6.40/7.00

» 100 քիւ. 9. 20/9. 50

Կիւնտէ վահան 40/50 վէ. 500—600

արապա կէմէքտէ, վահան մուամէ-

լէսի նարօլէօն 20 ֆր. արապա մու-

ամէլէսի նարօլէօն 20. 20

ՊԱՊԱԼԻՑԷ

Վարնա բնացալընտա պագալիլէ  
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուն  
ֆրանք իլէ։

ԳԱՀՎԷ 2.10/ 2.25

ՇԷՔԷՐ Նէմէք 87

ՇԷՔԷՐ քէսմէ) սանտրոգ 43

ԲԻՐԻՆՃ ձէնօվա չուվալը 42.

» Ֆիլիպէ » 35/38

» Ինկիլիզ » 32

Բիզօն » 49.

ԿԱԶ Սանտրոգ 10 60

Ջէթիւն հաղը քիւ. 85—1. 5

ԳՈՒՐՈՒ Իւգիւմ 48

Եուսուրթա 100 ատէթի 7. 40

## ՕԹԷԼ ՍԱՄՍՈՆ

ԱՂԷՔԱՆՏՐԻՍ.

Ճամի Թեպալանի դէն քիւ 18

Տիար Ս. Շէքէրանի վարչութեան  
տակ գտնուող այս ծովագրեայ եւ  
օդաւէտ պանդօղը իր մաքրութեամբ  
եւ ամեն կատարելութեամբ յանձնա-  
րարիլ է մէր հայրենակիցներուն։ Այ-  
ցելուն հոն կը գտնէ նաեւ մաքուր  
ճաշարան մը արեւելեան եւ եւրոպական  
ճաշկով մաքուր եւ համաթամ կերա-  
կուրներով։ Գիները չափաւոր են։

## ՄՇԱԿ

Օրաթերթ քաղաքական, գրական  
Բաժնեգիր՝ Եւրոպայի համար 30 ֆր.  
Ամերիկայի համար 6 ամլար, Պարսկաս-  
տանի եւ Ռուսաստանի համար 10 րուպ-  
լի տարեկան։  
Հասցէ՝ Խմբագրութիւն «ՄՇԱԿ» ի  
Կովկաս) Թիֆլիս

Одговор редакторъ А. Курбетянъ

печатница Д. Тодоровъ и С-ие — Варна